# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Երևանի Դավթաշեն վարչական շրջանում ֆուտբոլի դպրոցի կառուցման նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ երկրորդ հանրային քննարկման

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ժամը 11:00-ին, Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի նստավայրում (ք.Երևան Դավթաշեն, 3-րդ թաղամաս, 23/1 շենք) տեղի ունեցավ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված Երևանի Դավթաշեն վարչական շրջանում ֆուտբոլի դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վարդան Հարությունյանը: Նա նշեց, որ փորձաքննության գործընթացը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը՝ նշելով, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում հնարավոր բնապահպանական ազդեցությունների և ռիսկերի մասին: Հարությունյանը նշեց, որ ՇՄԱԳ հաշվետվության մեջ ներառված բնապահպանական կառավարման պլանով նախատեսված են բոլոր հնարավոր բացասական աղեցությունների մեղմացման միջոցառումները:

Նախագծող-ճարտարապետ Նարեկ Ռշտունին ներկայացրեց դպրոցի նախագիծը և հիմնական նախագծային լուծումները:

**<u>Քննարկում</u>**

**Հարց 1.** Հարությունյանը նշեց, որ նախագծում և ՇՄԱԳ հաշվետվության մեջ առկա են տարբերություններ հողի մակերեսի վերաբերյալ. լրամշակման արդյունքում իրականացվել են փոփոխություններ ՇՄԱԳ հաշվետվության մեջ, սակայն նախագծում հողի մակերեսի ցուցանիշը այլ է:

Ռշտունին նշեց, որ հողի մակերեսի վերաբերյալ լիազոր մարմինների կողմից ներկայացված տվյալներում առկա են եղել որոշակի անճշտություններ, որի հետևանքով հնարավոր են առաջացած տարբերությունները: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ հողի մակերեսը հաստատող օրենքով նախատեսված իրավական ակտը հողի սեփականության վկայականն է, նախագծային ցուցանիշները կվերանայվեն վկայականի տվյալներին համապատասխան և կներառվեն լրամշակված փաստաթղթերի ի լրումն ներկայացվող նյութերում:

**Հարց 2.** Առողջապահության նախարարության կողմից ներկայացված կարծիքը չի ներառվել լրամշակման ամփոփաթերթում:
ՇՄԱԳ հաշվետվությունը մշակած «Թրիգգեր» ընկերության ներկայացուցիչը նշեց, որ Առողջապահության նախարարության կարծիքը ընդունվել է ի գիտություն, բայց չի ենթադրել որևէ փոփոխություն ՇՄԱԳ հաշվետվության մեջ:
**Հարց 3.** Բարձրացվեց Երևանի քաղաքապետարանի կողմից դենդրոնախագծի հաստատման հարցը :
Ռշտունին պաստասխանեց, որ դենդրոնախագիծը պարտադիր կներկայացվի քաղաքապետարանի հաստատմանը մինչև շինարարության մեկնարկը: Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը համաձայնեց, որ դենդրոնախագիծը պետք է պարտադիր հաստատվի մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը:
**Հարց 4.** Հարությունյանը նշեց, որ Ճարտարապետահատակագծային առաջադրանքով նախատեսված է, որ շինությունների բարձրությունը չի գերազանցելու 16մ., սակայն նախագծով նախատեսվում է 17,5 մ բարձրությամբ շինություն:
Ռշտունին նշեց, որ հիմնավորումը ներառված է ՇՄԱԳ հաշվետվության մեջ, ըստ որի նորմատիվներով սահմանվում է, որ ֆուտբոլային փակ մարզադաշտի ազատ բարձրությունը պետք է կազմի 12-16մ.: Տրիբունաների կոնստրուկցիաների բարձրությունը, միանալով այդ ազատ բարձրությանը, ընդհանուր առմամբ կազմում է նվազագույնը 17,5 մ: Նշված բարձրության իջեցման դեպքում կառուցվող փակ մարզադաշտը չի համապատասխանի ՖԻՖԱ-ի և այլ միջազգային ֆուտբոլային կառույցների կողմից սահմանված նորմերին, որը նախագծային առաջադրանքի պարտադիր պահանջ է:

Վ. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

**Վարող և պատասխանատու՝** Վ. Հարությունյան

**Ձեռնարկող՝ «Ստուդիո 23» ՍՊԸ-ի տնօրեն** Ն. Ռշտունի